




ԵՐԱԿՐՈՆԵԱ ՄԵՍԿՈՆ

ՄԱՅՐ ԱՔՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դասադասում է

Նայատյացության հերթական դրսևորում էր օրերս Բաքվում բացված, այսպես կոչված, «Ռազմավարի զբոսայգին»՝ հայ գինվորականներին եւ ռազմագերիներին պատկերող անմարդկային, նվաստացուցիչ տեսարաններով։ Աղբբեջանի ղեկավարությունը շարունակում է իրականացնել ազգամիջյան թշնամանքի հրահրման իր քաղաքականությունը՝ անտեսելով միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերը։ Այսօր աղբբեջանական բանտերում շարունակում են նեղությունների եւ չարչարանքների ենթարկվել գերեվարված մեր զավակները, տառապում են հազարավոր տեղահանված եւ ունեզրկված ընտանիքներ, իսկ գրավված եւ հանձնված արցախյան տարածքներում չեն դադարում վայրագությունները մեր հազարամյա հոգեւոր-մշակութային ժառանգության նկատմամբ։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դատապարտելով հետպատերազմյան շրջանում Աղբբեջանի հակամարդկային եւ հակաբարոյական գործողությունները, կոչ է անում միջազգային հանրությանը, պատկան կազմակերպություններին ու կառույցներին՝ պատշաճ գնահատականի արժանացնել մարդու իրավունքների կոպիտ ոտնահարման, ազգի արժանապատվության վիրավորման այս երեւոյթները։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով

Մեկ դարից ավելի է անցել Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրված եւ իրագործված Հայոց ցեղասպանությունից։ Եղեռնահար մեր ժողովուրդը փրկված բնկորներով ցրվեց աշխարհով մեկ՝ իր պատմական հայրենիքում եւ գաղթի անպատկերելու թողնելով մեկ եւ կես միլիոն նահատակների։ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի ցեղասպանությունը արձանագրված է որպես մարդկության դեմ գործված դարի առաջին հանցագործություն՝ ազգի բնաջնջման, էթնիկ լոջանանքի հրեշավոր դրսևորումներով։ Ցեղասպանության ողբերգության ցավն այսօր արցախյան պատերազմի ծանր կորուստներով նորովի է պատել մեր ժողովրդի հոգին։ Մեր սուրբ նահատակների լույս հիշատակի առջեւ մեր նվիրական պարտքն է ամրապնդել ազգային միաբանությունը, ներքաղաքական զարգացումներում զերծ մնալ բռնություններից ու բախումներից եւ նախանձախնդիր ոգով հետամուտ լինել մեր իրավունքների պաշտպանությանը։ Մեր ժողովրդի կյանքը ձեռքբերումներով զարդարելու, մեր առջեւ ծառացած մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմակայելու գրավականը պետության գորացման պատասխանատվության բարձր զգացումն է եւ համախմբումը ազգային ու հոգեւոր արժեքների շուրջ։ Մեր սուրբ նահատակների բարեխոսության հայցով աղոթում ենք Ամենողորմ Տիրոջը, որ խաղաղ ու անվտանգ լինի մեր երկիրը, եւ աշխարհասփյուռ մեր ժողովուրդը միական ու միասնական կերտի իր բարօր ու լուսավոր ապագան՝ հանուն ազգի ու հայրենյաց։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր



րորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Ս. Գայանե վանքում մասնակցեց Պատարագի արարողությանը։ Հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների մատուցարանը։ Օրվա պատարագից եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ Պարգեւ արք. Մարտիրոսյանը։ Հնթագս սուրբ եւ անմահ Պատարագի ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով։

Ապրիլի 24-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը։ Հուշահամալիրում ծաղկեպսակ գետեղելուց հետո, անմարկրակի մոտ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ, քանզի 2015 թ. ապրիլի 23-ին, երբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի սրբադասման արարողությունը, ապրիլի 24-ը հռչակվեց որպես «Յիշատակ Սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս ցեղասպանութեան Հայոց վասն հաւատոյ եւ վասն Հայրենեաց»։ Ծիծեռնակաբերդ այցից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկ-



Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մատուցարանը, ուղղվեց դեպի Մայր տաճարի շրջափակ, ուր Աղոթքի եւ ուխտի խաչքարի առջեւ եւս, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ։



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



16 ապրիլի

Ավստրիա բուժման մեկնող զինվորականների

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց արցախյան երկրորդ պատերազմում տարբեր աստիճանների վիրավորումներ ստացած զինվորականների, որոնք առաջիկա օրերին մեկնելու են Ավստրիա՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակության նախաձեռնությամբ ու աջակցությամբ ստանալու անհրաժեշտ հետագա բժշկական օգնությունը եւ վերջույթների պրոթեզավորումը։ Ծրագրի առաջին փուլում բուժում կստանա վեց զինվորական։

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն, բ. գ. դ., պրոֆեսոր Արմեն Չարչյանը Նորին Սրբությանը ներկայացրեց բուժման մեկնող զինվորականներին՝ տեղեկացնելով, որ Հայաստանի տարբեր բուժօգնություններում արվել է առավելագույնը հայրենյաց պաշտպանների կյանքը փրկելու համար։ Պարոն Չարչյանը հաստատեց նաեւ, որ վիրավորումներ ստացած հայորդիները կարիք ունեն լրացուցիչ բուժման, որպեսզի նրանց ապաքինումը լինի առավել արդյունավետ ու ամբողջական։ Այս առիթով պարոն Չարչյանն իր երախտագիտությունը հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակությանը՝ հայ համայնքի ջանքերով եւ միջեկեղեցական կառույցների օժանդակությամբ հայորդիների հետագա բուժումը Վիեննայի լավա-

զույն բուժօգնություններում կազմակերպելու համար։

Իր հայրական օրհնությունը փոխանցելով քաջարի զինվորականներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը բերեց նրանց՝ հայրենիքին մատուցած անձնվեր ծառայության եւ պատերազմի օրերին դրսևորած հերոսական ոգու եւ դիմակայության համար։ Նորին Սրբությունը փաստեց, որ հայ ժողովրդի յուրաքանչյուր զավակ երախտապարտ է եւ ըստ ամենայնի արժեքներով է նրանց՝ ի սեր հայրենիքի դրսևորած անձնագրի քաջագործությունները։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ Հայ Եկեղեցին անցած տարիներին եւս իր աջակցությունն է ցուցաբերել նախկինում վիրավորում ստացած հայրենյաց պաշտպաններին՝ ջանալով նպաստել նրանց բնականոն կյանքի վերականգնմանը։

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ Մայր Աթոռն իր աշխարհասփյուռ թեմերի ու համայնքների միջոցով ամեն ջանք ի գործ պիտի դնի՝ շարունակելու ըստ անհրաժեշտության կազմակերպել տարբեր վիրավորումներ ստացած զինվորականների բուժումն արտերկրի բուժօգնություններում։ Նորին Սրբությանը ցանկությունն էր, որ լրացուցիչ բուժումն օգնի հայորդիներին՝ հաղթահարելու առկա խնդիրները եւ ապաքինվելով վերադառնալու ազգին եւ հայրենիքին իրենց ծառայությամբ։

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց զինվորականներին՝ մաղթելով բարի ապաքինում եւ շուտափույթ վերադարձ հայրենիք։

17 ապրիլի

Արցախի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանին։

Վեհափառ Հայրապետն ու Արցախի նախագահը քննարկեցին արցախահայության առջեւ ծառացած մարտահրավերները եւ արցախյան երկրորդ պատերազմի հետեւանքների հաղթահարմանն ուղղված քայլերը։ Այս առումով երկուստեք կարելուվեց համագործակցել մերժելու մեկնությունը՝ ի գործակցություն Արցախի ժողովրդի։

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց ներկա պայմաններում արցախահայության, մասնավորապես զոհված, գերության մեջ գտնվող զինվորականների եւ անհայտ կորածների ընտանիքների հոգեւոր խնամքին եւ աջակցությանն ուղղված Մայր Աթոռի ծրագրերին։ Այս կապակցությամբ Արցախի նախագահը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ Մայր Աթոռի եւ նրա աշխարհասփյուռ թեմերի գորակցու-



թյան համար պատերազմի ընթացքում եւ հետպատերազմյան շրջանում։ Վեհափառ Հայրապետը եւ նախագահ Արայիկ Հարությունյանը արծարծեցին նաեւ Արցախի բռնազավթված տարածքներում պատմամշակութային եւ հոգեւոր ժառանգության պահպանության, դրանց նկատմամբ ոտնձգությունների եւ վայրագությունների կասեցմանն ուղղությամբ Հայոց Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերը։

20 ապրիլի

ՀՀ բյուրոյի ներկայացուցիչ Նալոբ Տեր-Խաչատրյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ բյուրոյի ներկայացուցիչ Նալոբ Տեր-Խաչատրյանին։ Զրույցի ընթացքում քննարկվեցին Հայաստանի ներքաղաքական եւ բարոյահոգեբանական վիճակին առնչվող հարցեր։ Կարելուվեց Արցախում հետպատերազմական վերականգնողական աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը համագործակցելու միջոցով։ Անդրադարձ կատարվեց համահայկական ծրագրերի ընթացքին ու արդյունքներին։



22 ապրիլի

Լիբանանի Երիտասարդության եւ սպորտի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Հանրապետության երիտասարդության եւ սպորտի նախարար Վարդին Օհանյանին՝ ուղեկցությամբ Հայաստանում Լիբանանի արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Մայա Դադերի եւ Լիբանանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վահագն Աթաբեկյանի։

Վարդին Օհանյանը փոխանցեց Լիբանանի նախագահ Միշել Աունի ողջույններն ու բարեմաղթանքները՝ տեղեկացնելով, որ, իբրեւ Լիբանանի նախագահի հատուկ ներկայացուցիչ, Հայաստան է ժամանել մասնակցելու ապրիլի 24-ի Հայոց ցաղասպանության հիշատակի արարողություններին։ Նախարարն ընդգծեց նաեւ, որ Լիբանանահայության համար եւս պատմական հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների ու խնդիրների լուծումն առաջնային է, եւ հայ համայնքն իր հնարա-

վորությունների սահմաններում փորձում է նպաստել դրանց հաղթահարմանը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով նախարար Վարդին Օհանյանի այցը հայտնեց վերջինիս՝ այս դժվարին ժամանակաշրջանում հայրենիք այցելության համար։ Նորին Սրբությունը, անդրադառնալով երկու ժողովուրդներին պատուհասած արհավիրքներին, վստահություն հայտնեց, որ դրանք կհաղթահարեն Աստծու օգնականությամբ, լավատեսությամբ ու պատմական փորձառության շնորհիվ։ Հայոց Հայրապետը, ի դեմս նախարարի, իր ողջույններն ու բարեմաղթությունները փոխանցեց Լիբանանի նախագահին եւ կառավարությանը։

Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ հաստատեց, որ Լիբանանի իշխանությունները մշտապես աջակցել են Հայաստանին եւ բարձր գնահատել Լիբանանահայ համայնքի գործունեությունն ի նպաստ Լիբանանի զարգացման ու առաջընթացի։

Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Լիբանանի բարեկամ ժողովրդին՝ ցեղասպանությունը վերապրած հայորդիներին իրենց երկրում ապաստան տալու եւ ազգային կյանքի վերակազմակերպմանն աջակցելու համար։ Հայոց Հոլոկոստը վստահություն հայտնեց, որ երկու երկրների բարեկամությունը պիտի շարունակի նորանոր արդյունքներ գրանցել եւ առավել ամրապնդվել։

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Լիբանանահայության կյանքին եւ դիմագրաված դժվարություններին՝ կարելու նկատելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության առաքելությունը համայնքի պահպանման եւ զորացման գործում։

23 ապրիլի

Կենտրոնամերիկյան խորհրդարանի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կենտրոնամերիկյան խորհրդարանի նախագահ Ֆանի Կարոլինա Սալինաս Ֆերնանդեսի գլխավորած պատվիրակությանը։ Հայոց Հայրապետը ողջունեց ՀՀ Ազգային ժողովի եւ Կենտրոնամերիկյան խորհրդարանի միջեւ վերջին տարիներին հաստատված ջերմ հարաբերությունները՝ մաղթելով, որ ձեւավորված համագործակցությունը առաջիկա օրերին փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ արդյունավորվի նորանոր ձեռքբերումներով։

Նորին Սրբությունը կարելու նկատեց, որ տիկին Ֆերնանդեսի այցը Հայաստան տեղի է ունենում խորհրդանշական օրերին, երբ հայ ժողովուրդը ոգեկոչում է Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը։ Խոսելով մեկ դար առաջ հայ

ժողովրդի նկատմամբ գործված ցեղասպանության մասին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ նմանատիպ ոճրագործությունների բացառումը մարդկության պատմության մեջ հնարավոր է միայն բոլոր ազգերի համագործակցության շնորհիվ։ Հայոց Հոլոկոստը ընդգծեց, որ Կենտրոնամերիկյան խորհրդարանի պատվիրակության այցելությունը այդ համագործակցությանը միտված լինելու վկայություն է։

Վահափառ Հայրապետը անդրադարձ կատարեց նաեւ արցախյան երկրորդ պատերազմին եւ հայ ժողովրդի կրած կորուստներին՝ հույս հայտնելով, որ միջազգային հանրությունը կդատապարտի աշխարհի հայացքի առջեւ տեղի ունեցած պատերազմական հանցագործությունները։

Ճավակցագիր Վարդան Գրեգորյանի մահվան առիթով



Ապրիլի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը լուսահողի Վարդան Գրեգորյանի մահվան առիթով ցավակցագիր է հղել նրա ընտանիքին եւ բոլոր վշտացյալներին:

«Ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ տիար Վարդան Գրեգորյանի մահվան մասին:

Հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ բերում ենք Մեր սրտակցությունն ու ցավակցությունը մեզեցյալի ընտանիքին, հարազատներին ու բոլոր վշտացյալներին:

Հոգեւոր Վարդան Գրեգորյանը կրթական, գիտական եւ համրային ճանաչված գործիչ էր: Ավելի քան քսանամյա գործունեությամբ նա զուգակցում էր բերել հումանիտար գիտությունների զարգացմանը, բեղուն առաքելություններ իրականացրել ԱՄՆ-ի հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մեծ փորձառությամբ ու վաստակով լուսահողի Վարդան Գրեգորյանը գլխավորել

է Նյու Յորքի համրային գրադարանը՝ վերականգնելով գրադարանի մշակութային մշակական կարգավիճակը, եւ շուրջ երկուս ու կես տասնամյակ նախագահել Նյու Յորքի Կարմեզի հիմնադրամը՝ արգասավորելով բարեգործական այս հաստատության ծրագրերի իրականացումը աշխարհի տարբեր երկրներում: Նրա կերպարը ոգեշնչում էր սփյուռքի շատ գործիչների եւ օրինակելի էր նոր սերնդի համար:

Առանձնակի ջերմությամբ ենք անդրադառնում, որ համաշխարհային հռչակ ունենալով՝ հոգեւոր Վարդան Գրեգորյանը միշտ շեշտում էր իր ազգային պատկանելությունը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակ լինելը: Բարեհիշատակ հայորդին միշտ աշխույժ մասնակցություն էր բերում ամերիկահայ համայնքի հոգեւոր-եկեղեցական կյանքին, Պատարագի սրբազան արարողություններին, եկեղեցական կարեւոր միջոցառումներին ու ձեռնարկներին: Նրա սրտում հաստատուն էին հավատարմությունն ու

նախանձախնդրությունը՝ առ ազգն ու հայրենին: Նա համահիմնադիրն էր «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության եւ մեծապես կարեւորում էր Հայոց ցեղասպանության հանձնախմբի ծանաչման, Հայ դատի հաղթանակի, հարազատ Երկրի զորացման ու առաջընթացի գործում միջոցառումների մերթրումը, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդումն ու արդյունավորումը:

Աղոթք ենք բարձրացնում առ Ամենողորմ Աստված, որ Իր անսահման գթությամբ երկնային երանական բարձունքներում խաղաղություն եւ հանգստություն պարգևի հանգուցյալ Վարդան Գրեգորյանի լույս հոգուն: Այլեւ հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփուփանքը մեզեցյալի ընտանյաց անդամներին ու հարազատներին եւ սգակիր բոլոր անձանց»:

Ապրիլի 25-ին Սուրբ Գայանե վանքում մատուցված Պատարագի ավարտին, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ

Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ մորոգ հանգուցյալ հոգեւոր Վարդան Գրեգորյանի համար:

Սուրբ Պատարագին եւ հոգեհանգստյան արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության» համահիմնադիր Ռուբեն Վարդանյանը եւ «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովի նախագահ լորդ Արա Դարզին:

Արարողության ավարտին Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը, անդրադառնալով կրթական, գիտական եւ համրային ճանաչված գործիչ, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության» համահիմնադիր, Նյու Յորքի Կարմեզի հիմնադրամի նախագահ բարեհիշատակ Վարդան Գրեգորյանի օրինակելի կերպարին, վերստին իր աղոթքը բարձրացրեց անվանի հայորդու հոգու հանգստության եւ խաղաղության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Կենտրոնամերիկյան խորհրդարանի նախագահին

← **էջ 2** Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ աշխարհը կարող է զարգանալ եւ առաջընթաց արձանագրել մարդկային կյանքը խարսխելով իրավունքի, արդարության ու ճշմարտության արժեքների վրա:

կան կրոն հռչակած երկրում: Անդրադառնալով Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների կրած դժվարություններին եւ դատապարտելով մարդկության դեմ ոճրագործությունները՝ նախագահ Ֆերնանդեսն ընդգծեց, որ ձեռավորվող



իր հերթին տիկին Ֆերնանդեսը, ուրախություն հայտնելով ընդունելության առիթով, նշեց, որ իր համար կարեւոր է լինել աշխարհում առաջինը քրիստոնեությունը որպես պետա-

համագործակցության շնորհիվ Կենտրոնամերիկյան խորհրդարանում ընդգրկված ժողովուրդները կդառնան կամուրջ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

25 ապրիլի Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Սենատի նախագահ Ժերար Լարշեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժոնաթան Լաբոտի:

Ողջունելով Սենատի նախագահ Լարշեի ու սենատորների այցը Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների դարավոր

բարեկամությանը՝ իբրեւ վկայություն բերելով Հայոց ցեղասպանության տարիներին եղեմը վերապրած բազմաթիվ հայորդիներին Ֆրանսիայի կողմից ցուցաբերված աջակցությունը: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Սենատի նախագահին եւ պատվիրակության անդամներին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ներդրված ջանքերի համար:

Նորին Սրբությունը նաեւ հայ ժողովրդի անունից երախտագիտություն հայտնեց Սե-



նատի ներկայացուցիչներին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում դարբաբայան հակամարտության կարգավորմանն ուղղված Ֆրանսիայի ջանքերի համար: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հակառակ այդ ամենի, Ադրբեջանը Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական խմբավորումների աջակցությամբ սանձազերծեց պատերազմ, ինչն ունեցավ աղետալի հետեւանքներ: Նորին Սրբությունը նշեց, որ Եղեմի վիշտը հայ ժողովուրդը մորովի վերապրեց Արցախյան երկրորդ պատերազմից հետո՝ իր սրտում ունենալով զոհված հայորդիների կորստի ցավը:

Հայոց Հայրապետը մտահոգությամբ հաստատեց, որ այսօր էլ՝ հետպատերազմյան շրջանում, ադրբեջանական կողմը հանդես է գալիս ագրեսիվ կեցվածքով՝ շարունակելով սպառնալիքների իր հռետորաբանությունը եւ վտանգելով փխրուն խաղաղությունը տարածաշրջանում: Արցախյան հիմնահարցի կարգավորման եւ առկա հետեւանքների հաղթահարման հարցում Նորին Սրբությունը կարեւորեց միջազգային հանրության եւ Մինսկի խմբի համանախագահող երկրների աջակցու-

թյունը: Քննարկման առարկա դարձավ նաեւ համատեղ հայտարարությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների խախտումը Ադրբեջանի կողմից, մասնավորապես գերության մեջ հայտնված զինվորականների եւ քաղաքացիական անձանց վերադարձի հարցը:

Իր հերթին Սենատի նախագահ Լարշեն, անդրադառնալով այս օրերի այցելությանը, նշեց, որ իրենց նպատակը Հայաստանի հետ համերաշխության արտահայտումն է: Խոսելով Ցեղասպանությունից հետո Ֆրանսիայում ապաստանած հայերի մասին՝ պարոն Լարշեն իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի համար դժվարին ժամանակաշրջանների հաղթահարման գործում նրանց մեծ ներդրում ունենալու համար: Իր խոսքի ավարտին պարոն Լարշեն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում իրենք հավատարիմ են Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի՝ քսան տարի առաջ ստանձնած նախաձեռնությանը:

Հանդիպման ավարտին Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ, ապա Սուրբ Գայանե վանքում ներկա գտնվեց Պատարագի արարողությանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական հարցերով ենթախմբի հայտարարությունը

Ապրիլի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական հարցերով ենթախումբը, քննարկելով վերջերս ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի՝ հարցազրույցներից մեկում բարձրաձայնված դիրքորոշումը՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի առնչությամբ, հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ:

Հայտարարություն

Որեք առաջ կրթական փոփոխությունների գործընթացի վերաբերյալ իր հրապարակային խոսքում ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն անդրադարձ կատարեց նաեւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հետագա դասավանդմանը: Հիշյալ հարցը, ս/թ փետրվարի 12-ին, քննարկվել է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական հարցերով ենթախմբի եւ ԿԳՄՍ նախարարի եւ նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում, որի վերջնարդյունքներն արձանագրվել են փոխանակված մամուլներում:

Ըստ էության՝ նախարարը կրկնեց նախկինում նախարարության կողմից արդեն իսկ առաջարկված անկատար նույն լուծումը, համաձայն որի՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի համար 236 դասաժամի փոխարեն նախատեսվում է տրամադրել ընդամենը 64 դասաժամ:

Սույն մոտեցումը բացարձակապես անընդունելի է թե՛ հոգեւոր եւ թե՛ ազգային շահերի տեսանկյունից եւ խոր հակասության մեջ է Սահմանադրության 18-րդ հոդվածի հիմնադրույթների հետ: Առավել անհանդուրժելի է, երբ այն մատուցվում է փոխգիշտման անվան ներքո: Սերունդների ազգային կրթության եւ դաստիարակության հարցում փոխգիշտման գործելաոճը ուղղակի կործանարար է: Նախարարության առաջարկված այս մոտեցմամբ ի չիք են դարձվում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման 16 տարվա ընթացքում մեծ դժվարությամբ արձանագրված արդյունքները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական հարցերով ենթախումբը եւս մեկ անգամ վերահաստատում է իր դիրքորոշումը, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան իր ողջ ծավալով պետք է ընդգրկված լինի պարտադիր ուսուցանվող առարկաների ցանկում: Միաժամանակ ենթախումբը շարունակում է արտահայտել իր պատրաստակամությունը՝ բարեփոխումների ենթարկել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագիրը, մասնակցել դասագրքերի խմբագրմանը եւ ուսուցիչների վերապատրաստությանը՝ հիշյալ գործընթացների շրջանակներում անարձագանք չթողնելով մասնագիտական ու ազգային-հասարակական շրջանակներից հնչեցվող որեւէ առաջարկ:

Հարկ է ընդգծել, որ եկեղեցին սկզբից եւեթ խիստ վերապահումներ ունեցել է արտահայտել է կրթական բարեփոխումների կոչվող ծրագրի վերաբերյալ, քանի որ թե՛ ընդհանուր եւ թե՛ առարկայական չափորոշիչներում եւ դրանց շուրջ նախաձեռնված

քննարկումների ընթացքում արձանագրվել են սկզբունքային մի շարք բացթողումներ եւ առերեւոյթ հակասահմանադրական դրսևորումներ:

Կրթական բարեփոխումների նպատակների, հետեւաբար եւ դրանց արդյունավետության վերաբերյալ կասկածները առավել խորանում են, քանի որ այդ ուղղությամբ իշխանության իրավասու պաշտոնյաների եւ ի մասնավորի կրթության պետական լիազոր մարմնի ներկայացուցիչների կողմից՝ եկեղեցու մտահոգությունները փարատող հիմնավոր ու առարկայական որեւէ բացատրություն չի տրվել: Մինչդեռ ակնհայտ է, որ հիշյալ բարեփոխումների շրջանակներում հարվածի տակ են դրվել հայագիտական առարկաները, կտրականորեն նվազել են սերունդներին ռազմա-հայրենասիրական ոգով դաստիարակելու հնարավորությունները: Ավելորդ ենք համարում բացատրել, թե որքան անհրաժեշտ է այդպիսի կրթությունը մեր երկրին ու ժողովրդին, որը գտնվում է գոյաբանական վտանգների եւ պատերազմի մշտական սպառնալիքի առջեւ:

Կրթական բարեփոխումների գործընթացի իրականացման մեծ պայմաններում առկայծող մեր միակ հույսն այն էր, որ հանրակրթության ոլորտում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի, որպես պարտադիր բաղադրիչի, ամբողջական ծավալի պահպանումով հնարավոր կլիներ լրացնել այն բացը, որ ձեւավորվել է ազգային ինքնության եւ հոգեւոր դաստիարակության ոլորտում:

Այդ, նկատի առնելով իշխանությունների կողմից «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պարտադիր առարկայացանկից հնարավորինս դուրս մղելու հետեւողականորեն իրագործվող ապագային քաղաքականությունը, Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախումբը ամեն ջանք ի գործ է դնելու՝ կանխելու համար կործանարար այս մոտեցումը եւ հասնելու մեր ժողովրդի կենսական շահերին ծառայող իր՝ թե՛ պատմական, թե՛ բարոյական եւ թե՛ իրավական պահանջների կատարմանը:

Որպես վերջաբան՝ տեղին ենք համարում վկայակոչել միջնադարյան բազմաշնորհ ու լայնմիտ ու մեր հայրերից Ներսես արք. Լամբրոնացու խիստ այժմեական պատգամը. «Ամենայն ազգ գիր հարց աւանդութիւն պիտո՞ւ կայցի»:

Թող Աստված գորացնի մեր ժողովրդին՝ իր ինքնության համար մղվող հոգեւոր ու մարմնավոր պատերազմում. ամեն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական հարցերով ենթախումբ


Ինչպես հայաթափվեց Մախիջեւանը

Նայերիս պատմական հայրենիքի կենտրոնական հատվածներից մեկը՝ Մեծ Հայքի Վասպուրական, Սյունիք եւ Այրարատ աշխարհների նշանավոր խաչմերուկ Նախիջեւանը թուրք-բուլղերիկյան խարդակներով 1921 թվականին բռնակցվեց Հարավային Կովկասում երբեք գոյություն չունեցած՝ նորաստեղծ մի կազմավորման՝ Ադրբեջանին, եւ խորհրդային ժամանակաշրջանում ստեղծված քաղաքական նպաստավոր պայմաններում խորհրդային այդ հանրապետությունում իրականացվեց թուրք-ադրբեջանցիների դարավոր երազանքը՝ նրա շուրջ յոթ տասնյակ հայ բնակավայրերի հայաթափումը:

Ինչպես հայտնի է, 1604–1605 թթ. շահա-

տություն են տեղափոխվել մինչեւ 1925 թ. ապրիլի 1-ը: Սակայն, հայերից դատարկված երբեմնի հայաշատ Կզնուտը, Շահկերտը (Ղազանչի), Այլապատը, Աստապատը, Աբրակունիսը եւ այլ խոշոր բնակավայրեր սկսեցին բնակեցվել Ջանգեզուրից, Վայոց ձորից, Ադրբեջանի շրջաններից տեղափոխված եւ տեղացի ադրբեջանցիներով:

—1927 թ. Նախիջեւան եկավ ԽՍՀՄ Կենտրոնականի նախագահ Ալեքսեյ Ռիկովը՝ իր հետ բերելով Նախիջեւանի հայերից ստացված բազմաթիվ դիմումներ,— պատմում էր Նախիջեւանի նորագույն շրջանի պատմության գիտակ եւ ակնմատես, ճանաչված լրագրող Հարություն Սկրտչյանը:— Նրա կարգադրությամբ ձերբակալվեցին, մույ-



բայան հայտնի բռնագաղթից հետո Նախիջեւանը մեծ մասամբ կորցրել էր հայ բնակչությունը, իսկ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արեւելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց եւ Երեւանի նահանգի գավառներից մեկը դառնալուց հետո կրկին սկսել էր հայաշատ դառնալ:

1918 թ. իրադարձությունների նախօրյակին Նախիջեւանի բնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին. այնտեղ տեղափոխվել էր ոչ միայն, Թուրքմենչայի պայմանագրով, Իրանի Խոյ, Սալմաստ եւ Մարաղա գավառների հայության մի մասը, այլեւ՝ Մեծ եղեռնից փրկված բազմաթիվ գաղթականներ: Նրանց մեծ մասը, սակայն, հայրենի երկրամասից գաղթեց 1918–20 թթ. ծավալված հայտնի իրադարձությունների ընթացքում:

Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից նորելուկ այս հանրապետության իշխանությունները գաղթած հայերին արգելեցին վերադառնալ հայրենի օջախները. 1922 թ. հանիսի 24-ին Ադրբեջանի ժողովրդի նախագահ Գազանֆար Մուսաբեկովը Հայաստանի կառավարությանը հայտնեց, որ «Ադրբեջանի Կենտգործկոմի որոշմամբ հայ բնակչության զանգվածային վերաբնակությունը Ադրբեջանի սահմաններում, այդ թվում՝ Նախիջեւանում, արգելվում է»: Չնայած հայ տարագիրների՝ Երեւանին, Բաքվին եւ Մոսկվային ուղղած բազմաթիվ բողոքներին ու խնդրանքներին՝ Նախիջեւանի Կենտգործկոմի 1926 թ. ապրիլի 26-ի եւ Ադրբեջանի Կենտգործկոմի նույն թվականի մայիսի 29-ի որոշումներով այդ հարցը փակվեց՝ պատճառաբանվելով, որ «Նախիջեւանի ԽՍՀ գյուղացիությունը ապահովված չէ անհրաժեշտ քանակության հողով՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար եւ հողի խիստ կարիք ունի», ուստի «ցանկացած գաղթականների վերաբնակեցումը Նախիջեւանի ԽՍՀ-ում տեղի գյուղացիությանը կզնի ծայրահեղ ծանր դրությամբ», ուստի «առաջարկվում է Նախիջեւանի ԽՍՀ հողժողովումստի՛ն՝ հողաբաժիններ տալ միայն այն անձանց, ովքեր հանրապե-

նիսկ զնդակահարվեցին ինքնավար հանրապետության մի շարք ղեկավարներ, եւ հայերին թույլատրվեց վերադառնալ իրենց բնակավայրերը: 30-ական թվականների կեսերին հայության թիվը նույնիսկ սկսեց աճել եւ մոտենալ բնակչության ընդհանուր թվի 25 տոկոսին, գործում էին 30 գյուղական եւ 4 քաղաքային հայկական դպրոցներ, Նախիջեւանի մանկավարժական եւ բժշկական ուսումնարանների հայկական բաժանմունքները, հայկական թատրոնը, եւ հայ կյանքը շրջափեղիորեն սկսեց բնականոն հունի մեջ ընկնել:

Սակայն այս փոփոխություններն Ադրբեջանին չէին կարող դուր գալ, եւ 30-ականների վերջերից, օգտվելով ստալինյան ծավալվող բռնությունների ընձեռած հնարավորություններից, սկսեց գործել պետական մակարդակով կազմակերպված հայաթափման մի նոր՝ առավել անկասելի ծրագիր: Նախ փակվեցին հիշյալ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների հայկական բաժանմունքները, հայկական թատրոնը, ազգությամբ ադրբեջանցիներով փոխարինվեցին ինքնավար հանրապետության հայազգի մի շարք ղեկավարներ: Այդ եւ հետագա տարիներին անթաքույց հալածանքների զոհ դարձան Նախիջեւանի ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Հագարապետ Գրիգորյանը, փոխվարչապետ Մնացական Մինասյանը, Շահբուզի շրջկոմի առաջին քարտուղար Մամիկոն Հովակիմյանը, կուսակցական-պետական գործիչներ Հովհաննես Գրիգորյանը, Նորիկ Գրիգորյանը եւ շատ ուրիշներ:

Իշխանությունները կանխամտածված խոչընդոտում էին անգամ Հայաստանի հետ մշակութային կապերը, չէին բաժանորդագրում Հայաստանում լույս տեսնող պարբերականները: Իսկ հետագայում, հատկապես 60-ականներից սկսած, շրջկոմները հայաբնակ գյուղերի վրա դնում էին գյուղատնտեսական առաջադրանքների մեծ մասը, աշխատանքից ազատում ժողովրդի մեջ հեղինակություն ունեցող ղեկավարներին: ➔ էջ 6

Վեհափառ Հայրառեքը մեկնեց ԱՄՆ

Ապրիլի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: ԱՄՆ հայոց արելեյան թեմում Վեհափառ Հայրապետը կհանդիպի թեմակալ առաջնորդի եւ թեմական խորհրդի հետ:

Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու նրանց հոգաժողությամբ իրականացվող ծրագրերը: Նախատեսվում են հանդիպումներ այլ անձանց եւ կազմակերպությունների հետ, որոնց ընթացքում կարծարծվեն արցախյան երկրորդ պատերազմի պատճառած

հետեւանքների եւ առկա մարտահրավերների հետ առնչված հարցեր:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետի հետ լինելու են Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ խաժակ արք. Պարսամյանը եւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եգրաս արք. Ներսիսյանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ Պարգեւ արք. Մարտիրոսյանը մեկնել է ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ:

Լրատվական Նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–7

ՎԻՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Նայի բնավորության այս արատավոր կողմը ռուսական մեծամոլության դիրքերից ճանաչում էր իշխանուհի Կաթիկի-նան, որի մանկությունն անցել էր Կովկասի հայաշատ քաղաքներից մեկում, որտեղ իր հայրը եղել էր գավառապետ։ Ահա ինչու նա ամուսնուն հորդորում էր. «Լավ հայը երբեք չի ռուսանա, իսկ վատ հայն ավելի վատ-թար մարդ չի կա աշխարհիս երեսին, — համոզված էր իշխանուհին։— Ուրեմն որ կողմը կուզես շուտ տուր, Եվդոքիան հայի հետ չի կարող պսակվի... Ինչո՞ւ այս գեղեցիկ, քան-քարավոր երիտասարդը ռուս կամ եվրոպացի չէ։ Ինչպե՞ս մեր Եվդոքիան բախտավոր կլինի» (3, 101)։

Բայց ահա նույն Կաթիկինան հիաց-նունքով է արտահայտվում երաժշտության ուսուցչի՝ պրոֆեսոր Յենգելի երաշխավո-

րությանը նրան փոխարինած Շուշանի կամ Սուսաննայի մասին։ Կաթիկինների տանը հայտնվում են միմյանց հա-կապատներ երկու հայ՝ մեկը՝ արտաքին գեղեցկությամբ, ստոր շահախնդրություններով, չնչին նպատակների համար հերոսական ջանքեր ներդնող անհոգի Աթմազովը, մյուսը՝ Պետերբուրգում եւ աշխարհում միայնակ մնացած որբ հայ աղջիկը՝ վայելչակազմ ու բարեհամբույր, բարձր մարդավարությամբ հատկանշ-վող հայուհին՝ Շուշանը։ Երկու համազգի՝ տարբեր բնավորությամբ եւ էությանը, որոնց հակասությունները բացա-

հայտվում են իշխան Կաթիկինի՝ բարձր պաշտոն ստանալու կապակցությամբ իշխանուհու կազմակերպած պարահանդեսի ժամանակ։

Արդեն ճանաչված Աթմազովը՝ այս նոր «հայ Չիչիկովը», շքեղ պարահանդեսում չի ունենում ոչ մի պարընկեր։ Իշխանուհի Կաթիկինայի շնորհիվ Աթմազովին արդեն ճանաչող թե՛ Եվդոկիան, թե՛ բարձրաստի-ճան մյուս կանայք արհամարհում եւ մեր-ժում են նրան։ Նեղ վիճակից Աթմազովին փրկելու փորձ է անում Շուշանը, որն այդ հանդեսին հարգազույց զգեստ էր հագել ու մանուշակագույն ժապավեններ կապել հենց Աթմազովի ճաշակով։ Բոլոր օտարնե-րից արհամարհված երիտասարդը ճարա-հատյալ պարում է համազգի Շուշանի հետ, բայց կրծքի տակ «չերմ սրտի փոխարեն կարծես սառցի կտոր» ունեցող երիտա-սարդը համակրանքի ոչ մի արտահայտու-թյուն, ոչ մի սիրալիք խոսք ու քնքշություն չի դրսևորում նրա հանդեպ, որով ավելի է

խորացնում շրջապատի ատելությունը։

Այնուհետեւ Շուշանն ինքն է մերժում Աթ-մազովի պարի հրավերը, բայց նրա գեղեց-կությունն ու բարեկրթությունն անմիջապես նկատում է պարահանդեսին ներկա գեր-մանացի մի զինվորական։ Իր հայրենակ-ցից հիասթափված Շուշանը, որ նշանավոր Արդուբյան տոհմից էր, պարզվում է՝ ժա-ռանգորդն էր իր հանգուցյալ ծնողների եւ մայրացուհի կտակած մեծ հարստության, ընդունում է գնդապետ Շթուբեի ամուս-նության առաջարկը՝ պայմանով, որ իրենց երեխաները՝ տղա թե՛ աղջիկ, հայ պիտի մկրտվեն ու դաստիարակվեն։

Վարչավայի հյուրանոցում հեղինակ-պատմողը մոսկվացի հայ քահանայից իմանում է, որ նա եկել էր բարձր պաշտոն ունեցող գերմանացի գեներալի որդուն հայ մկրտելու։ Ուրեմն՝ իրագործվել էր Շուշա-նի պայմանը։

Իսկ մերժված, ծախսողված, բախտախն-դիր Աթմազովը, որ չէր կարող ձեռնունայն վերադառնալ Թիֆլիս կամ Չայաստան, հարստության ակնկալիքով ճարահատ ամուսնանում է իրենից տարիքով բավա-կան մեծ գերմանուհի Մարիխենի հետ։ Նրա խնամակալը հորեղբայրն էր՝ ծերունի Շմիդ-տը, որն ինքն է ամուսնանում, իսկ օրինա-կան ժառանգը պիտի դառնար նրա ապա-գա զավակը։ Հարստանալու այս հույսն էլ կորցրած Աթմազովը խոստացել էր ինք-նասպան լինել երեխան ծնվելու դեպքում։

«Տիկին եւ նաժիշտ»։ Վերջին վեպն է սա, որ Պատկանյանը գրել է 1883 թ.։ Վերնագ-րում արդեն առկա է ժամանակների նա-խասիրած հակադրությունը, որը վիպական գործողությունների առաջնիչն ուժն է եւ դրսևորվում է իրար հանգուցված իդեալ եւ հակաիդեալ կերպարների բնավորություն-ներում։

Վեպի հիմքում ընկած են կատարված

իրողություններ։ Պատկանյանագետները պարզել են այդ կերպարների նախատի-պերը եւ պատկերվող գործողությունների՝ իրականությանը համապատասխանելու աստիճանը (*տես Սադյան Մ., նշվ. աշխ., էջ 326–327, ինչպես նաեւ՝ Սակարյան Ա., Սողոյան Ա., նշվ. աշխ.*)։ Իրողություն է, որ նախատիպ Գեորգ Քանանյանը, մոսկվացի հայ մեծահարուստ վաճառական Հովհան-նես Հովնանյանի միակ դստեր՝ Վառվառեի տնային ուսուցիչը լինելով, թունդ սիրա-հարված է եղել իր աշակերտուհուն, եւ սերը եղել է փոխադարձ։ Սակայն միլիոնատեր ու հայատյաց հայրը, իմանալով այդ մասին, ոչ միայն վնդում է Քանանյանին, այլեւ մի ուրիշ մեծահարուստի՝ Աղաթոն Աքմյանի Նիկողոս որդու հետ է բռնի ամուսնացնում իր աղջկան եւ կործանման դատապար-տում նրան։

Վեպում այս իրողությունները ներկա-յացված են Ասատուր աղայի, նրա դստեր՝ Սոֆյայի, եւ Վարդանի կերպարներով ու նրանց հարաբերություններով։ Սա նույն-պես խաբուսիկ ռեալիզմի տպավորություն կարող է ստեղծել, բայց այդ բեւեռացված հերոսները, որ հեղինակի գաղափարական միտումների կրողներն են, գործում են ոչ թե միջավայրի եւ համագնացների թելադրան-քով, այլ ենթակա են հեղինակի ռոմանտի-կական գեղագիտության ուղղորդումներին։

Հեղինակը հնարամտորեն է գործադրել երկու տեսությանների պատմությունը. առա-ջինը Էսենտուկիում մի ռուս պառավից 15 ռուբլով իր գնածն է, երկրորդը՝ բժիշկ Վարդան Հուսիկյանի կամ Հուսկանյա-նի՝ նրան ուզարկածը։ Ընդ որում՝ առաջին տեսությանը ներկայացնում է Սոֆյայի տիկին եւ Կատյայի նաժիշտ լինելու շրջանը, երկ-րորդ տեսությամբ՝ հակառակը՝ Կատյայի տիկին եւ Սոֆյայի նաժիշտ լինելու շրջանը։

→ էջ 7, 8

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում

Սկիզբը՝ թիվ 4–7

Մարդկանց հետ երրորդության Անձերի խոսելը իր «Լուծմունք Յոբայ» երկում բավականին հետաքրքրական է մեկնաբա-նում Գրիգոր Տաթևացին. «Այլ ասեմք, թե երրորդությունն խօսի աստ. Նախ՝ զի Հայր՝ որպես միտք, եւ Որդի՝ որպես բան եւ Հո-գին՝ որպես խօսք։ Արդ, թե Հայրն խօսի եւ թե Որդի Հոգւովն խօսի։ Դարձեալ ասեմք, թե որպէս Հայր կրկին խօսեցաւ եւ Որդին այժմ կրկին խօսի, նոյնպէս եւ Հոգին Սուրբ» (մեջբերումը միջնորդավորված է. *Էյլա Սա-րիբեկյան, Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Յոբայ» երկում առկա աստվածաբանական խնդիրները, «Տարեգիր» գիտական հոդ-վածների ժողովածու, Երևան, 2016, թիվ ԺԱ, էջ 61*)։ Ուրեմն, ինչպես կրոնադիցաբա-նական ընկալումներում, այնպես էլ Իշխանի բանաստեղծություններում, խոսքը դառնում է գոյին շարժման մեջ դնող եւ տիեզերա-կան լույսի ճառագման մոգական ուժ։

Բանը միայն, որ ամեն ժամ, ամենուր Պիտի դառնար իմ արյունիս մեղեդին, Լույսի մատյան, հավատքի զանգ հեշտալուր, Իմ կյանքիս մեջ՝ սիրատուն կյանքն ուրիշին։ (էջ 59)

Հետևաբար, այս համատեքստում ամ-բողջացնելով կրակի խորհրդապատկեր-ները, պետք է ասենք, որ կրակը՝ իր տա-րատեսակ փոփոխականներով, խոսքն է, որն արարվում է եւ բարձրաձայն, եւ լռության մեջ։ Սա են վկայում մի շարք բանաստեղ-ծությունների եզրափակիչ տողերը. «Բայց ես կըզգամ լռության տրոփյունին մեջ մեծ-դի, // Որ դուն միշտ կաս, ո՞վ Աստված, ո՞վ անհուն սեր մեծագոր, // Եվ դեռ կրնաս գիս փրկել, եթե քեզի զամ այսօր...» («Գիշերա-մուտ», էջ 74), կամ՝ «Նվազն ահա՛ լուսահոս՝ // Սիրո անհուն ջուրերուն, // Ահա՛ կյան-քի տո՛նն է հոս, // Աստվածացուն եւ գա-

րուն...» («Քայլերգ մահուան», էջ 85)։ Սա «ի խորոց սրտի» դուրս եկած աղերսական խոսք է, աղոթք է առ Աստված։ Իսկ աղոթ-քի նպատակը փրկությունն է։ Հետևաբար, լույս—լռություն բառիմաստները խորքում Աստված են նշանակում։ Ահա թե ինչու է Իշխանը, ինչպես Նարեկացին, Մեծարենցը եւ Թումանյանը նյութականացնում, մարդե-ղացնում Աստծուն՝ «Աստված» նշանակող «Լռություն» եւ «Հավերժություն» բառերը գրելով մեծատառով։


«Կրակը» ժողովածուում ամփոփվում է «Կրակը» բանաստեղծությամբ, որտեղ կրակը հանդես է գալիս ոչ միայն որպես վերացական հասկացություն, այլեւ որպես երկնային տարերք՝ կայծակ, եւ երկրային տարերք՝ ակուբ։ Այս ստեղծագործության մեջ առկա կրակի պատկերները կարծես հուշում են, որ Իշխանի գեղարվեստափի-լիսոփայությունը սնվում է նաեւ հեթանոսա-կան շրջանի տիեզերաճանաչողությունից.

Փետրվարի ցուրտ գիշեր. դուրսը՝ անձեղ
ու քամի
Ընկողմանած ծուլորեն վառ գոլին
դեմ ակուբին՝
Ես կը ծխեմ հեշտանքով եւ կը խորհիմ
մեկուսի՝
Իմ հեթանոս պապերուս, որ կրակն այս
պաշտեցին։ (էջ 86)

Կրակարանի կողքին նստած՝ աշխար-հի մասին միտք անող քնարական հերո-սը հոգին ջերմացնելու կայծեր է որոնում։ Նա երկմտում է՝ արդյոք կգտնի՞ «քանի մը կայծ» հոգու սառնությունը տաքացնելու համար։ Թեեւ հեղինակն իր մտքերն ամփո-փում է հռետորական հարցադրումներով, սակայն դրանք կարելի է դիտարկել ոչ թե որպես հարցադրումներ, այլ հաստատու-մեր, հաստատումներ հետեւյալ գաղափա-րի. տիեզերքի լույսը՝ հույսը ու հավատը, մարդ արարածի մեջ է, այլ տեղում այն

չպետք է փնտրել։ Կրակի այսպիսի ընկա-լումներով բանաստեղծը հաստատում է իր եւ իր սերնդակիցների՝ օտարության մեջ ապրելու, կարոտի կրակներում այրվելու, սակայն երբեք չհուսալքվելու գոյակերպը եւ հայ ժողովրդի հարատևության գաղափա-րը («Կրակ» ժողովածուում յուրահատուկ դրսևորում ունի սիրո կրակը, որը, մեր կարծիքով, առանձին քննարկման նյութ է)։ Սա ընդհանրացնող մի ավարտ է, իշխա-նյան հոգու կրակի փնտրտուքի տրամաբա-նական ավարտը։

Որպես ամփոփում պետք է ասել, որ Մու-շեղ Իշխանի բանաստեղծական տողերը՝ իրենց պատկերավորման-արտահայտչա-կան միջոցներով, արտահայտում են ոչ միայն բանաստեղծի հուզաշխարհը, այլեւ վերարտադրում են նրա սերնդակիցների ապրումները ու զգացողությունները։ Իշ-խանի ստեղծագործություններն անկեղծ մենախոսություն-խոստովանություններ են, որոնք թույլ են տալիս մեկնաբանելու գրողի ժամանակի հասարակական-քաղաքական կյանքը։ «Կրակ» ժողովածուի գեղարվես-տական պատկերները քննելով բանաս-տեղծություններում հանդես եկող կրակի եւ այլ նշանների զուգորդությամբ՝ կարող ենք ասել, որ Իշխանի մտածողությանը բնորոշ է կրակի խորհրդապաշտությունը։ Միեւ-նույն պատկերը երբեմն մի քանի իմաստնե-ր է խտացնում, եւ երբեմն հնարավոր չէ մեկնաբանել կրակի համանման կիրառում-ների խորհուրդը, դրանց բոլոր իմաստնե-րը։ Ընթերցողն ունենում է անբավարարու-թյան այն նույն զգացումը, ինչը ունեցել է Հ. Օշակյանը 4. Ջարյանի երկերի խորհրդա-պաշտական արժարժումների մասին դա-տողություններ անելիս. տանջվել «դժվար տարազելի բանն մը, որ անբավարարու-թյան, անհամապատասխան խոսք զգացում մըն է» (Հ. Օշակյան, *Հայ գրականություն, երու-սադեն, 1966, էջ 614*)։ Իրոք, գեղարվեստա-



կան խոսքը, որը մարդու հոգեկան աշխար-հի ծնունդ է, ողջ խորությամբ ընկալելի չէ։ Սակայն, համադրելով «Կրակը» ժողովա-ծուում տեղ գտած կրակի գեղարվեստա-կան պատկերները, կարող ենք վստահորեն ասել, որ կրակը խոսք է նշանակում, կենա-րար խոսք, որ վերածվում է աղոթքի, իսկ աղոթքը հավատ է։ Այդ հավատն է փրկու-թյան միակ ճանապարհը՝ ճանապարհի դեպի արարիչ Աստված։ Հետևաբար, «Կրակը» ժողովածուի խորհրդանշական աշխարհը կարելի է արտահայտել հետեւ-յալ նշանաշարով՝ կրակ—լռություն—խոսք—աղոթք—աստվածային լույս։

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության
ամբիոնի դասախոս

Մուշեղ Գալշոյան

Սկիզբը՝ թիվ 3-7

Կորստի ու կարոտի պատկերներին հաջորդում են գոյատևած ու հաստատման օրերը, եւ նոր հիմնադրված Քարազուխ գյուղում Ջորի Միրոն առաջինն էր, որ ծուխ հանեց իր երդիկից, եւ մարդիկ «ծուխ շնչեցին»։ Խանութի ու Նարեի հուշերը կենդանացան Սառնի մեջ, կյանքը շարունակվեց Յարութ որդու ծնունդով, որն իր անունով իսկ խորհրդանշում է ցեղի հարությունը։



«Կածանի ճամփորդներ» վիպակն անմիջական կապ ունի մախորդի հետ։ Դեպքերի վայրը նույն լեռնային գյուղն է, հերոսները՝ նույն գաղթականները, Միրոյի սերնդակիցները։ Հեղինակը չի ծանրանում յուրաքանչյուր կերպարի վրա, այլ թռուցիկ, բայց բնութագրական

ուրվագծերով կերտում է նրանց դիմաքանդակները. հոգեբանորեն նման, անհատապես՝ տարբեր։

Ահա Կռպեն, որը քար է աղում, որ հող ստեղծի, որը կյանքում միայն մի երգ գիտի՝ «Մշեցու օրորոցայինը» եւ այն երգում է թե՛ հարսանքատանը, թե՛ գերեզմանոցում։ Ահա դաշտապահ Օսոն. «Օսո, ղև հետ կզուցիս»,— պատասխանը միշտ նույնն է՝ «Աշխարքի, քարերի»։ Հոյակապ է գյուղի նահապետի՝ Նոյի կերպարը։ Նա ինքը հենց անցյալն ու ներկան է, կյանքն ու հավերժությունը։ Եվ այսպես շարունակ՝ հովիվ Ավգի, սայլապան Արո, Վարդե մարե եւ այս բոլորի մեջ գյուղի երիտասարդ վարժապետի՝ Խելիկի կերպարը։ Դրանք հեռացող սերնդի մարդիկ են, որոնցից յուրաքանչյուրի կյանքը մի-մի պատմություն է։ Նոյ պապի մեռնելուց հետո հեռացումի կսկիծն ու մորմոքն այսպես է արտահայտվում. «Ասեք, որ թաղեցինք արեւի տակ եղած վերջին ճախրկանցուն՝ մի գյուղ-աշխարհ, մի հին աղաղ, լեզվի անուշ մի երանգ»։

Այս հերոսները, իրար լրացնելով, դառնում են հայրենի բնաշխարհի մի մասը, ինչպես սրբատեղի դարձած մի հուշարձան կամ պատմության գաղտնիքներն իր մեջ կրող հիմնավորը մի ամբողջ։ Նրանց ապրելու իմաստը մեկը մյուսին պահ տված կենսագրությունն է։ Իրար մեջ, իրար հետ եւ իրարով՝ ահա նրանց սկզբունքը, որն այսպիսի դատողության է վերածվում. «Մարդիկ ապրում են միայն իրենցից դուրս, ուրիշի մեջ։ Քեզանից հետո թե կա մեկը, թեկուզ մեկը եւ հիշում է քեզ, դու էլ ես ապրում»։ Պ. Դուրյանի տողերի փիլիսոփայությունն է՝ «Եվ հիշատակս ալ թառամի, Ահ, այն ատեն ես կը մեռնիմ»։ Միրոյի համար իր հիշատակը պահողը որդին էր, իսկ այս ամբողջ սերնդի համար՝ նրանց կյանքի տարեգիր-հեղինակը, որն ուներ այսպիսի ուղեցույց սկզբունք. «Հերն անիծած, հետաքրքիր են աշխարհն ու մարդիկ, ավելի շուտ՝ մարդիկ, մարդիկ։ Մարդն ինքը աշխարհն է, ծայրից-ծայր... Մարդը, գիտե՞ս... կարող է աշխարհը մեծացնել։ Մեծացնել կամ փոքրացնել։ Հենց այս Կռպեն»։

Այսպես «Կռունկ»-ի հերոսներով եւ իր ստեղծագործության, եւ ժամանակի գրականության հոգեւոր դաշտը մեծացրեց Ս. Գալշոյանը։

«Քովտուն» վեպն իր հերթին յուրովի շարունակում է «Կածանի ճամփորդներ»-ի կյանքի ուղին։ Նյութը Հայաստանի քարքարոտ տարածությունների յուրացումն է։ Պատկերվող ժամանակաշրջանը 1950–1960-ական թվականներն են։ Վերստին հողի աշխատավորներն են նրա հերոսները՝ ամեն մեկն իր ճանապարհով, իր նպատակներին հետամուտ, բայց գործողությունների մեջ՝ միասնական։ Աշխատանքային հարաբերություններն ու առօրյան դառնում են այն գլխավոր միջավայրը, ուր զարգանում են վիպական գործողությունները։

Հեղինակը ոչ թե միագիծ հունով է զարգացնում գործողությունները՝ ընտրելով մեկ կամ երկու գլխավոր հերոսի, այլ՝ բազմահուն ու բազմաշերտ։ Գլխավոր հերոսներ, ըստ էության, չկան, չկան նաեւ երկրորդական հերոսներ։ Բոլորն էլ կարելի էր են ամբողջությամբ ներկայացնում են գյուղական կյանքին բնորոշ բնավորություններ։

→ էջ 8

Ինչպես հայաթափվեց Մախիջեւանը

← էջ 4

Օրինակ՝ Գյոմուր եւ Առինջ գյուղերի կոլտնտեսությունների նախագահներին աշխատանքից ազատելուց հետո դեպի Հայաստան «կամավոր» բռնագաղթի ճանապարհը բռնեցին ոչ միայն հիշյալ գյուղերի հուսալքված բնակիչները, այլեւ Բաբոնք (Կարաբաբա), Օծոփ (Բաղամուլ), Նորս գյուղերի, Շահապոնք (Շահբուլ) շրջկենտրոնի հայերը։ Իսկ նրանց գնալուց ընդամենը մի քանի օր անց ադրբեջանցիներն անարգել տիրացան տիրագուրկ տներին ու այգիներին։ Այնուհետեւ սկսվեց երնջակի (Ջուլֆայի շրջան) հայկական գյուղերի՝ Շոռոթի, Փորադաշտի, Գյաղի գաղթը։ Իսկ դեռեւս 50-ականներին սպիտակ եղեռնի առաջին փուլը տեղահանել էր Աստապատ, Յարմա (Երնջակ), Լենինաբադ գյուղերի հայությունը, Նախիջեւան եւ Ջուլֆա քաղաքների հայ բնակչության զգալի մասին։

Կատարվածի մեջ, անշուշտ, մեղքի իրենց բաժինն ունեին խորհրդային Հայաստանի իշխանությունները, քանի որ իր գլխին եկած այդ մեծ ողբերգության տասնամյակներում Նախիջեւանահայությունը բոլորովին միայնակ էր։ Հայաստանի կառավարությունը չէր փորձում սատարել, օժանդակել նրան անգամ մանկավարժական, բժշկական, մշակույթի բնագավառների կադրերով երկրամասն ապահովելու, տեղացի երիտասարդներին արտամրցության կարգով բուհեր ընդունելու եւ հետագայում իրենց ծննդավայրերն ուղարկելու հարցերում։ Ավելին, սփյուռքահայերին գրավելու «ծաղկուն եւ հյուրընկալ հայրենիքի» գովքերով ու գունագարդ կոչերով ավելի շատ խարխուլ է բնիկ



հայկական Նախիջեւանի, Արցախի, Ուտիքի եւ Զավախքի հիմքերը։ Եզակի բացառություններից մեկն էր, թերեւս, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Յակով Ջարոբյանի կարգադրությամբ ամենախոշոր հայկական գյուղը՝ Ազմաբերդը Երեւանին կապող մշտական ավտոբուսային երթուղու ստեղծումը, որը մեծապես նպաստեց բնակավայրի գոյատևմանը։

Եվ այսպես, պետական քաղաքականության բազմաթիվ գործոնների ազդեցության տակ հայության թիվը կրկին սկսեց նվազել՝ 1960-ին կազմելով մոտ 10 տոկոս, իսկ 1988-ի հայտնի իրադարձությունների նախօրյակին՝ ընդամենը 1,5 տոկոս, որի մոտ 1 տոկոսն ապրում էր Ազմաբերդում, 0,5 տոկոսը՝ պատմական Գողթն գավառի տարածքի հայ գյուղերում (Ցղնա, Փառակա, Բիստ, Վերին Ազա, Դեր, Ռամիս, Տանակերտ, Ալաի, Մեարոպավան), ինչպես նաեւ Նախիջեւան, Ջուլֆա, Շահապոնք քաղաքներում։

— Հայության վերջնական տեղահանությունն իրագործվեց 1988 թվականի նոյեմբերի 22-ին,— շարունակում էր պատմել Հարություն Մկրտչյանը։— Նախիջեւան քաղաքի կենտրոնում տեղի ունեցած հակահայ համրահավաքին մասնակցող մոլեռանդների գազազած ամբոխը, նախ ջարդելով մարզկոմի դռներն ու լուսամուտները, ապա այրելով խորհրդային բանակի երկու հրասայլ, ցրվեց քաղաքով

մեկ՝ հաշվեհարդար տեսնելու հայերի հետ։ Գիշերվա ժամը 12-ին հայտարարվեց արտակարգ դրություն, երբ քաղաքից արդեն գաղթել էին վերջին 122 հայ ընտանիքները։

Համամասն իրադարձությունների հետեւանքով՝ նույն բախտին արժանացան նաեւ մնացած փոքրաթիվ հայ բնակավայրերը... Կատաղած թուրք ամբոխին հակահարված տվեց միայն Ազմաբերդը. մինչեւ «խաղաղարար» խորհրդային զորքի ժամանումը զոհվեցին 3 եւ վիրավորվեցին 7 ադրբեջանցի ելուզակներ։ Սակայն Հայաստանից սպասվող կազմակերպված օգնության բացակայությունը, խորհրդային բանակի բացահայտ ադրբեջանամետ կեցվածքը, Հայաստանին հասած անսպասելի մեծ արհավիրքը հուսալքեցին ազմաբերդցիներին, եւ նրանք ի վերջո ստիպված եղան հեռանալ հայրենի վայրերից...

Նախիջեւանի հայությունը գաղթի օրերին տվել է 10 զոհ, բռնագաղթվածները հիմնականում վերաբնակվել են Վայքի, Եղեգնաձորի, Արարատի, Արտաշատի, Մասիսի շրջաններում եւ Երեւանում։

...Իսկ հետագա տարիներին մեր հայրենիքի ողբերգականորեն հայազրկված Նախիջեւանյան հատվածում ոսոխը շարունակեց իրագործել ճերմակ եւ կարմիր եղեռններին չզիջող մշակութային ցեղասպանությունը՝ հայկական հուշարձանների ոչնչացումը, որն սկիզբ է առել դեռեւս խորհրդային իշխանության «արշալույսին»...

Համամարդկային մշակույթի եւ մարդկության դեմ գործված այդ ահավոր հանցագործությունների մեղքը ադրբեջանցի «մտավորականները» վերջերս սիրում էին բարդել Արցախյան շարժման վրա՝ մոռանալով, որ 88-ի մեր ազգային զարթոնքից դեռ շատ առաջ միայն Նախիջեւանի տարածքում ոչնչացվել են հարյուրից ավելի հուշարձաններ եւ հուշարձանախմբեր (համանման բազմաթիվ փաստեր կան նաեւ մնացած գերյալ հայկական շրջաններում)։ Հենց Նախիջեւան քաղաքում 1975 թվականին, շինարարության պատրվակով, ավերվել է 7-րդ դարի մշանավոր Ս. Երրորդություն եկեղեցին, 1971-ին Համաշխարհային երկրորդ պատերազմի զոհերի համար հուշարձան կառուցելու «ամենահարմար» տեղը քաղաքի հայկական գերեզմանատունը համարելով՝ նրա մեծ մասը թաղեցին հողի, ավազի եւ շինարարական աղբի հսկայական կույտերի տակ, տապալաքարերի մի մասով էլ շարեցին հանրապետական հիվանդանոցի պատերը։ 1987 թվականի հոկտեմբերին, դարձյալ շինարարության պատրվակով, ամբողջովին ավերվեց եւ հողին հավասարեցվեց Ազուլիսի գլխավոր գերեզմանատունը՝ իր շուրջ 400 տապանաքարերով, որոնցից 100-ը՝ արժեքավոր արձանագրություններով։

1986 թվականին Օծոփի Ս. Աստվածածին վանքի այլոներից լինգերով գազանաբար հանվել էին հսկայան քարեր՝ անման հուշարձանի կյանքը տասնյակ անգամներ կրճատելու նպատակով։ Գողթնի Ցղնա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին վեր էր ածվել... թունաքիմիկատների եւ պարարտամյութերի պահեստի, իսկ Ազուլիսի հռչակավոր տաճարները ծառայում էին որպես... անասնազոմեր։ Նախքան հիմնահատակ ավերումը՝ Հին Ջուլայի հռչակավոր խաչքարերի «անտառից» պարբերաբար կտրատվում, տեղահանվում եւ որպես կենցաղային շինանյութ էին օգտագործվում հայ խաչքարագործության ժանեկախյուս գլուխգործոցները...

Իսկ Նախիջեւանի, այսպես կոչված, պատմության պետական թանգարանի մուտքի մոտ ցուցադրաբար տեղադրված՝ Ջուլայի գերեզմանատնից զոհացված-բերված խոյածեւ մի տապանաքարի կռնակից կրկին ցուցադրաբար քերված հայերեն արձանագրությունը խորհրդանշում էր այն հակահայ քաղաքականությունը, որ վարում էր Ադրբեջանը տասնամյակներ շարունակ... Ահա ընդամենը մի քանիսը բազում-բազում հրեշավոր փաստերից...

...Նախիջեւանի պատմության լուռ վկաներին բաժին հասած հետագա դաժան ճակատագիրը աննկարագրելի է եւ անպատկերացելի։ Սակայն Հայոց Նախիջեւանի հիմնավորը հողում դեռեւս հրաշքով պատսպարվող մեր քարեղեն նվիրական հիշատակների բեկորները, շունչ ու ոգի առած, անմահանջ սպասում են իրենց բնօրրանի իրական տերերին եւ երկրամասի նոր արշալույսին...

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Զարեհ Որբունու պարմվածքները



մասնատվեց կղզյակների: Այսպես սկզբնավորվեց սփյուռքյան գրականությունը, որտեղ ամեն բան պայմանավորված էր ներագային կյանքով՝ կախված տեղական յուրահատկություններից (Վ. Գաբրիելյան, *Հայ նորագույն գրականություն. Սփյուռքահայ գրականություն, Երևան, 2016, էջ 83*):

«Սփյուռքահայ գրականությունը, — գրում է գրականագետ Գ. Սեւանը, — մի տեղ սկսվեց 1918 թ., մի այլ տեղ՝ ավելի ուշ՝ քսանական թթ. կեսերից, եւ պատահեց նաեւ, որ մի այլ վայրում այն համոզեւ եկավ երեսնական թթ.» (Գ. Սեւան, *Սփյուռքահայ գրականության ուրվագծեր, հ. 1, Երևան, 1980, էջ 10–11*): Այդ գրականությունը եղել էւ այսօր էլ մնում է պատմեշ ուժացման եւ նահանգի դեմ, իբրեւ ազգային կենդանի հիշողություն եւ շատ հաճախ համոզեւ է գալիս կարոտի բովանդակությամբ: Կազմավորման շրջանում լայն տարածում գտան բանաստեղծությունն ու պատմվածքը, իսկ առաջին վեպերը գրվեցին միայն 20-ական թթ. վերջերին:

Սփյուռքահայ գրականությունը զարգացման մի քանի շրջան է անցել՝ 20-ական թթ. (ծննդավորման շրջան), 30-ական թթ. (համալրման ու ամրապնդման շրջան), ապա՝ հետպատերազմյան շրջան՝ իր երկու փուլով՝ մինչեւ 60-ական թթ. սկիզբը եւ հետո: Սփյուռքյան գրականության առաջին տասնամյակում իրենց մասնակցությունը բերին տարբեր սերնդի գրողներ: Դեռ 1980–1990-ական թթ. սապարեզ իջած եւ դարասկզբին արտասահման անցած արեւմտահայ գրողներ Տիգրան Կամսարականը, Վահան Մալեգյանը, Արշակ Զոպանյանը, Ռուբեն Որբեյանը, Զապել Եսայանը եւ ուրիշներ շարունակում էին իրենց գրական-հասարակական գործունեությունը: Ավելի ակտիվ էր միջին սերունդը՝ Կոստան Զարյան, Վահան Թեքեյան,

Հակոբ Օշական, Հակոբ Սիրունի: Գրական ասպարեզ էր իջել հայ գողգոթայի ականատես երիտասարդ սերունդը՝ Համաստեղ, Հակոբ Մեծնորի, Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Զարեհ Որբունի, Նիկողոս Սաֆարյան, Դեւ, Արամ Հայկազ, Վահե Հայկ, Բենիամին Նուրիկյան եւ ուրիշներ: Գրողների մի խումբ խնկարկում էր մինչեղենյան հողի պաշտամունքը՝ Համաստեղ, Շուշանյան, Մեծնորի, Վահե Հայկ եւ ուրիշներ, Օշականը, Թեքեյանը, Կ. Զարյանը բորբոքել էին ուզում ազգային ոգին: Շուշանյանը, Որբունին, Զարգարյանը, Շահնուրը պատկերում էին հայի տառապանքը, փորձում վերլուծել կյանքի երեւոյթները՝ զգուշացնելով ուժացման վտանգի մասին: Եթե 1920-ական թվականների գրողն ուզում էր փարատել հայրենակիցների կարոտախտը՝ ծննդավայրի վերհուշներով, ապա տասնամյակի վերջում եւ 1930-ական թթ. սկզբին նա շրջվում էր դեպի իրականությունը, դեպի նոր կյանքը՝ ընդգծելով ծառացած մեծ վտանգը՝ ուժացումը:

1920–1930-ական թթ. սփյուռքահայ գրականությունն առավելապես զարգացում էր ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայի գաղթօջախներում: Արեւմտահայ վերապրող սերնդի հետ միասին աչքի են ընկնում Շուշանյանը, Շահնուրը, Հրաչ Զարգարյանը, Զարեհ Որբունին, Թովմայանը, Սարաֆյանը, Մանուշյանը, Աթանասյանը: Ամերիկայում՝ Համաստեղը, Արամ Հայկազը, Նուրիկյանը, Վահե Հայկը: Բալկաններում առավել ակտիվ էր մամուլը, սակայն գրական մեծություններ այդպես էլ չծնվեցին: Մերձավոր Արեւելքում գրական մեծություններ երեսու եկան 1930-ականների՝ Մուշեղ Իշխան, Անդրանիկ Ծառուկյան, Վահե-Վահյան, Սիրան Սեզա, Ժազ Հակոբյան եւ ուրիշներ, որոնց տաղանդը նոր ուժով է դրսևորվում հաջորդ տասնամյակներում:

Սփյուռքահայ գրողների շարքում առանձնանում է Զարեհ Որբունու գրական աշխարհը: Զարեհ Էռքայուզյանը (1902–

1980) ցեղասպանության որբերի սերնդից է: Եվ գրական կեղծանունն էլ՝ Որբունի, այդ մասին, թերեւս, արժե առավել մանրամասն պատմել:

Հայ արձակագիր Զարեհ Որբունին ծնվել է 1902 թ. Սեւ ծովի ափին գտնվող Օրդու քաղաքում: Սովորել է ծննդավայրի Մովսիսյան վարժարանում մինչեւ 1915 թվականը: Հայրը սպանվել է Սեւ եղեռնի ժամանակ: Մայրը երեխաներին փախցրել է Ռուսաստան: 1919 թ. Սեւաստոպոլից նրանց ընտանիքը տեղափոխվել է Պոլիս: Մինչեւ 1922 թվականը սովորել է Պերպերյան վարժարանում, 1922 թ. փախել է Ֆրանսիա:

Օրվա ապրուստը հայթայթելով այլազան աշխատանքներով՝ Որբունին 20-ական թվականներից եռանդուն մասնակցություն է բերել ֆրանսահայ գրական-մշակութային կյանքին: Պետրոս Զարոյանի հետ հրատարակել է «Նոր հավատք» հանդեսը, «Լուսաբաց» ամսաթերթը, աշխատակցել է սփյուռքի առաջադիմական մամուլին (Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 320) եւ հատկապես ֆրանսահայ հանդեսներին ու թերթերին («Նավասարդ», «Նոր գիր», «Մշակույթ», «Կյանք եւ արվեստ», «Մեք», «Անդաստան» եւ այլն):

Գրական փորձերն սկսել է աշակերտական տարիներից: Պերպերյանում սովորելու տարիներին առաջին անգամ Պոլսի «Ժողովրդի ձայն» թերթում Թեքեյանը հրատարակել է նրա «Գարուն» բանաստեղծությունը: «Հալածվածները» խորագրով չորս հատորով ծրագրված վեպի առաջին հատորը՝ «Փորձը» վերնագրով, լույս է ընծայել 1929 թվականին: Հետագայում լույս տեսան նաեւ մյուս երեք հատորները («Թեկնածուն»՝ 1967 թ., «Տարօրինակ օր մը», «Ասֆալտը»՝ 1972 թ.):

Շարունակելի

Սերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)

← էջ 5

Վիպական գործողությունների հավաստիության տպավորությունն ապահովելու համար հեղինակը, իբր, ճշգրտորեն ներկայացնում է օրագրի ձեւով գրված այդ տեղեկությունների պարունակությունը:

Բեւեռացված կերպարներով ռոմանտիկական այս վեպի դիպաշարն ընդգրկում է նաեւ նախընթաց գործողություններ, իսկ դեպքերը պատմողը տեղերի հեղինակն է՝ գործողությունների առանցքում գտնվող Վարդան Հուսիկյանը: Ըստ առաջին օրերի գրառումների՝ Մոսկվայի համալսարանն ավարտած Վարդանը, որ տեղ Մովսես քահանայի երաշխավորությամբ Ասատուր աղայի դստեր՝ նրա հարստության միակ ժառանգորդ Սոֆյայի տնային ուսուցիչն էր եղել հինգ տարի շարունակ եւ սաստիկ պարզամիտ նրան, պաշտոնից վճռվել է այն պահից, երբ օրինավորապես դիմել է աղային՝ աղջկան իրեն կնության տալու: Մեծամիտ ու հայատնայց վաճառականը, որն իր երես առած աղջկան տվել էր ծնողական վատ դաստիարակություն, հավատացրել էր, թե իր արժանավոր փեսան պիտի լինի առնվազն գնդապետ, զենեքալ կամ նահանգապետ: Նրան հյուր եկած համերկրացի աստրախանցիները, աղայի տանը տեսնելով երիտասարդ հայ ուսուցչին եւ գեղեցկությամբ փթող Սոֆյային, կասկած են հայտնում նրանց հնարավոր սիրո մասին եւ զգուշացնում, թե՛ պայթյունավտանգ է կրակն ու վառողը միմյանց մոտ դնելը:

Հարցին՝ մի՞թե նա իր աղջկան ռուսի կտա եւ հայությունից կհեռացնի, վերջինս բացեիբաց հայտնում է իր մտադրությունը հայերի հանդեպ անթաքույց արհամարհանքով.

«—Զէ, Սիմոն Մալխասիչ, էտ գումանից (կողմից) միամիտ կացիր: Սոֆինկան իմ մի

հատիկ զավակն ա, աչքիս լուսն ա, իմ միլիոնի ժառանգն ա, ես գիժ եմ, որ ես անփոխանին տամ...»

— Շատ պետք ա ինձ քո հաղթությունը, — ասաց քիթ պռունկը ծածկելով Ասատուր աղան, — ի՞նչ ա, ռուսը կռապաշտ ա, ինչ ա, նա էլ խոն մեզ մամն քրիստոնյա ա բալքի մի զատ էլ ավելի... թողե՛ք պաժալըստա ձեր ազգասիրությունը, ինչ փիս բան էդ ազգասիրութիւնի մեջն ա: Մեկ օր (դուք կացե՛ք) ամենքիդ կը փռնեն, Սիբիր կուղարկեն, եմ ժամանակ կիմանաք, թե ինչ ա նշանակւմ՝ ազգասիրությունը, հաղթությունը: Զէ, աղա ջան, իմ Սոֆինկեն աղավարի յա պալկովմիցա կիլի, յա եներալշա, յա գութեռնատորշա, դու գնա էլի ազգասիրութուն արա...» (*Պատկանյան Ռ., Երկեր, էջ 240*): Այս մտածողությունն ուներ Ասատուր աղան հակապատկերը հեղինակի ըմբռնումով իդեալական հայի:

Ստեղծվում է վիպական հետաքրքիր հանգույց, որի շուրջ ծավալված գործողությունների ավարտին փոխվում են գաղափարակիր երկու հերոսուհիների դիրքն ու դերը. տիկինը նաժիշտ է դառնում, նաժիշտը՝ տիկին:

Վարդանը, որ շատ կողմերով հիշեցնում է «Ես նշանած էի» վեպի Միքայել Վայելյանին, սկզբում սիրում էր Սոֆյային, որը կամակոր, օտարամոլ, թեթևամիտ, ինքնավստահ ու անհեռատես հայուհի էր: Ողջամիտ լինելու դեպքում Սոֆյան կարող էր ծնողներին համաձայնեցնել ու վարդանի հետ բախտավորվել, բայց ծնողների օտարամտությունը զավակին էր անցել. նա հրապուրվում է օտար զինվորականի արտաքին փայլով, սիրահարվում է բախտախնդիր ու ապաբարոյական Վադիմի Դեզդրով անունով ռուս սպային, որին էլ զոհում է իր անձը եւ հոր գանձը:

Սոֆյան եւ նրա օտարամոլ ծնողները

հանդուրժում են նշանադրության ժամանակ Դեզդրովի եւ մյուս հարբեցող ռուս սպաների անպարկեշտ ու վիրավորիչ արարքները: Իրենց ապագա փեսային ծանաչելուց հետո փոխանակ վտանգը չեզոքացնելու եւ փորձանքից հետ կանգնելու՝ Սոֆյան, ընհակառակը, հոր փողերը գողանալով՝ անհուսալի Դեզդրովի հետ փախչում է Փարիզ, որտեղ վերջինս մսխում է ամբողջ գումարը եւ Սոֆյային էլ մղում անբարո արարքների ու մարմնավաճառության, որի հետեւանքով նա ձեռք է բերում մարմինը քայքայող զանազան ախտեր:

Ինչպես մյուս վեպերում, այստեղ էլ գաղափարը եւ միտումը գերակա են գեղարվեստական համոզչության նկատմամբ, անակնկալը, դիպվածը, պատահականությունը, մախախնամությունը կամ երազներով կանխատեսումը հաճախ են դառնում գործողության առաջնորդ: Հերոսները հուզումնալից վիճակներում հաճախ են տրվում զգացմունքների ազատության: Հիշենք թեկուզ Կատյայի եւ Վարդանի՝ Տաք ջրում բաժանվելուց երկու տարի անց տիֆով վարակվածների հիվանդանոցում պատահաբար հանդիպման դրվագը, երբ երկուսն էլ միմյանց դիմավորում են անզուսպ արցունքներով: Դա էլ հենց սենտիմենտալիզմով շաղախված ռոմանտիզմի արտահայտություն է:

Առաջին տեստակով սկսված դիպաշարի մյուս կարեւոր գիծը Սոֆյայի նաժիշտ Կատյայի սերն է իր ուսուցիչ Վարդանի հանդեպ: Հայուհի Կատյան Սոֆյայի հակապատկերն է: Հաշտարխանցի ողջամիտ հայուհին, որ վաղ էր զրկվել ծնողներից ու հայտնվել նաժիշտի կարգավիճակում, քանիցս զգուշացնում է Վարդանին թեթևամիտ այդ աղջկա՝ իրեն անարժան լինելու մասին:

Կատյայի՝ Մոսկվա մեկնելու, ֆրանսիա-

ցու լվացքատանը բարեխղճորեն աշխատելով վեր բարձրանալու եւ հարստանալու ընթացքը, փոխանակ վիպական գործողության մեջ ցուցադրվելու, պատմվում է վիսնելով երկի գեղարվեստականությունը:

Կատյան որպես գաղափարատիպ, «Փառասերը» վեպի Շուշանի կրկնօրինակն է որոշ իմաստով: Պատկանյանը նրանց նման պարկեշտ ու համեստ, ազգային արմատներին հավատարիմ, հայ լեզվի ու հայ ընտանիքի նվիրյալ պահապան հրեշտակ էր պատկերացնում բոլոր ազգանվեր հայուհիներին: Երկրորդ տեստակի սկզբում Սյուլյուկ-հեղինակին ուղղված պատասխան մամուլում ահա ինչպես է արդեն բժշկապետ Վարդանը բնութագրում Կատյային. «Այս քանի տարի է, որ ես ոչ հայի գիրք առել եմ ձեռս, ոչ հայի երես են տեսել եւ ոչ հայի ժամերգություն եմ լսել. Միայն Կատյան է, որ իմ հայ լինելս միտս է ձգում. եթե նա չլինե՛ր՝ կրոն, ազգային ծեսեր եւ ավանդություններ եւ հայոց լեզու բոլորը ցնդած կլինեին իմ մեջեն» (*Մույն տեղում, էջ 282*):

«Տիկին եւ նաժիշտ» վեպն ունի կռահվող, սպասելի ավարտ. Վարդանը եւ Կատյան ամուսնանում են եւ ունենում երեք հայահունչ անուններով զավակներ՝ Վահան, Աշոտ եւ Բրաբին (հիշենք «Փառասեր» վեպի Շուշանին), Ասատուր աղան, լսելով Սոֆյայի դժբախտությունը, կաթվածահար մեռնում է, կինը՝ Օվսաննան, որ հայտնվել էր անկեղծանոցում, իրենց բոլոր դժբախտությունների համար մեղադրում է հայերին եւ հայիոյում նրանց: Անուղղելի հարբեցող Դեզդրովը դարձել է ստորաքարշ մուրացկան:

Անհամոզիչ է Սոֆյայի վախճանը: Անճանաչելիորեն փոխված՝ նա անակնկալ հայտնվում է Վարդան Հուսկանյանի տանը:

→ էջ 8

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



← էջ 5, 7

Բժշկապետը վեց ամիս բուժում է նրան: Վերափոխված երախտագետ Սոֆյան դառնում է Կատյայի նաժիշտը եւ բարեխղճորեն կատարում առտնին բոլոր գործերը: Առաջներում հայերենն ու հայությանն արհամարհող Սոֆյան կյանքի ծանր հարվածներից հետո Վարդանի ու Կատյայի ազդեցությամբ վերափոխվում է, սկսում է հայերեն թերթեր կարդալ, վերադառնալ իր ազգային արմատներին, հետաքրքրվում է Արեւմտյան Հայաստանում կատարված իրադարձություններով: Իր համագգիներին թուրքերի եւ քրդերի պատճառած նեղություններից ազատելու համար նա ուղեւորվում է պատմական հայրենիք: Օտարանով մեծահարուստ Ասատուր աղայի ոչ հայեցի հայրական դաստիարակության պատճառով հայությունից հեռացած, դեպի օտար քաղաքակրթություն ձգտող, իր հայրենիքն ու ազգակիցներին արհամարհող Սոֆյայի մեջ անգամ արթնանում են միտքող ազգային զգացմունքն ու հայրենասիրական գիտակցությունը, եւ հերոսուհին, իհարկե, հեղինակի կամքով, հասնում է Վան, առանց որի՝ Պատկանյանը հայրենիք ու Հայաստան չէր պատկերացնում: Վերջին մամակը Սոֆյան գրում է Երզնումից:

Հերոսուհու այս արարքը հեղինակի գաղափարական այն ծրագրի իրագործումն է, որով նա կամենում էր ժամանակի հայ երիտասարդությանը կողմնորոշել դեպի պատմական բնօրրան՝ Արեւմտյան Հայաստան:

Աբովյանական ավանդներով սնված Ռ. Պատկանյանն իր թե՛ չափածո, թե՛ արձակ ստեղծագործություններով, իրապարակախոսական երկերով ու մանկավարժական գործունեությամբ մեծապես նպաստել է մեր ժողովրդի հոգեմտավոր զարթոնքին, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Նա գեղարվեստական մեծ ուժով ստեղծել է մի անկրկնելի աշխարհ, ուր Հայաստան հայրենիքն ու հայ լինելու կոչումն արժեւորող հզոր քննադատությունը, անմրցելի ռազմերգերը, պատմվածքներում ու վեպերում կերտված իդեալական հայի կերպարները, նրա սուր ծաղրին ու հեգնանքին, հավիտենական թուքին արժանացած դատապարտելի տիպերը սերունդներ են դաստիարակել եւ լինելու են նաեւ գալիք սերունդների հարստությունը:

Սամվել ՄՈՒՐԱՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ Գալշոյան

← էջ 6

Անմիջական խառը հաջորդականությունը գալիս ու անցնում են տնտեսության տնօրեն Եղիա Կիրակոսյանը, գյուղատնտես Կիրաբ Բաղասյանը, պառավ Չանանը, գործավորներ Բագրատը, Ներսեսը, Երենը, Սանթրոն, Արտուշը, բրիգադիր Մարուխյանը, երիտասարդներ Արման, Նազիկը, Վարոսը, Միրաքը, Կարոն եւ ուրիշներ:

Վեպում չկա նաեւ գործողությունների զարգացման խիստ ընդգծվածություն: Պատկերվող իրադարձությունների ու հարաբերությունների շարժի հիմքը այս է. մի քանի մանր գյուղեր ջրամբարի կառուցման պատճառով մնացել են ջրի տակ, դրանց բնակիչները վերահաստատվել են նոր հիմնադրվող Հակինթ ավանում, նրանք մոր-մոր կառուցում են իրենց տները եւ քարտուկներից յուրացնում տնտեսական անհրաժեշտ ցանքատարածություններ: Հեղինակը գործողությունների այս ծավալումը դիտում է ամբողջական ընդգրկումով, նրա նպատակը մեկ դեպքի մեկ անձնավորության վրա ծանրանալը չէ, նրան հետաքրքրում է այն ամենը, ինչ կատարվում է գյուղում, եւ նրա աչքի առաջ են բոլոր այն մարդիկ, որոնք մասնակցում են կյանքի կառուցմանը: Գրողը կողքից, առարկայական հայացքով ու անմիջական անցումներով ներկայացնում է իր հերոսներին, որոնց դիմանկարներն ավարտում, ամբողջական տեսք են ստանում միայն պատումի վերջում՝ ընթացքում դրսևորելով իրենց էության ու բնավորության առանձին կողմերը:

Վեպի կառուցվածքին բնորոշ են, մի կողմից, իրական տարբեր վիճակների կտրուկ անցումները, դրանց համադրությունները, մյուս կողմից՝ ժամանակային տարբեր հատվածների հերթագայությունն ու միափոխումը: Առանձին որեւէ հերոսի Գալշոյանը ներկայացնում է թե՛ ներկա որեւէ վիճակում ու գործողության մեջ եւ թե՛ անցյալի ոգեկոչվածով: Ժամանակային տարբեր փուլերում հերոսներին ներկայացնելիս հեղինակն ընթացք է տալիս ներքին խոսքին: Ներքին խոսքի ընդգրկման շառավիղները մեծ են. դա մեկ անցյալի լուռ ու մուսնջ հիշողություն է, մեկ գրուցակցին անմիջականորեն ասվելիք խոսք, որը մնում է մտքում, մեկ վիրավորանքի դեմ ուղղված զայրացկոտ պատասխան, որ կուլ չի գնում: Ընդհանրապես, ներքին խոսքի կիրառությունը, «Ձորի Միրոն» վիպակից սկսած, նկատելի տեղ ունի Գալշոյանի ստեղծագործության մեջ:

Ասվածի ամփոփումն այն է, որ վեպում յուրաքանչյուր հերոս նախ՝ բարդ նկարագիր ունի իր ներսում, եւ ապա՝ բազմափուն, արտաքուստ կերպավորման խառն ու ընդմիջված ընթացք՝ ամբողջ վիպական հյուսվածքի մեջ:

Լայն տարածքի վրա հերոսների խառն ու փոփոխական, անակնկալ անցումներով ներկայացվում է գյուղական կյանքի ընդգրկումն մի պատկեր: Ամեն ինչ իրական է ու բնական: Աշխատանքային առօրյան ու հարաբերությունները պատկերվում են գործնական, չոր, ինչ-որ չափով՝ նույնիսկ կոպիտ ձևով: Դա էլ տարօրինակ չէ, որովհետեւ հենց այդպիսին է կյանքը: Հերոսներին խիստ ընդգծված գլխավորների ու երկրորդականների բաժանման բացակայության հետ մեկտեղ հեղինակն իր հերոսներին չի բեւեռացնում դրական ու բացասական հատկանիշների խտացումներով: Մնալով բնականության ու սովորականի սահմաններում՝ ռոմանտիկական հայեցակետով նա մի հերոսի չի կտրում իր միջավայրից ու շրջապատից եւ իդեալականացնում կամ հակառակը՝ խտացնում անցանկալի հատկանիշները: Բոլոր հերոսներն էլ դրականի ու բացասականի յուրովի համաձուլվածք են, եւ բացի դա՝ մաքրաջրված դրականն ու բացասականը խիստ պայմանական հասկացություններ են գրականության համար, քանի որ առաջնահերթ խնդիրը կերպարի լիարժեքությունն ու կեն-

սականության հարցն է: Վեպի բոլոր հերոսներն էլ սովորական մարդիկ են, որովհետեւ այդպիսին են նաեւ նրանց վիճակված կյանքն ու հարաբերությունը: Նույն միջավայրում նրանք իրար ճանաչում են ոտքից գլուխ, եւ բացառվում է մեկը մյուսի առջեւ «խաղալու» հնարավորությունը:

Վեպի հերոսները երևում են մեկ ջրամբարի տակ մնացող գյուղի ավերակներին մայելիս, մեկ տնտեսության շրջակա քարտուկներից հողերը մաքրելիս, մեկ այգետունկի ժամանակ: Վեպի երրորդ մասի գործողություններն սկսվում են այն պահին, երբ մախադրության անցքերից անցել է հինգ տարի: Ներկայացվող վիճակները գրեթե նույնն են՝ աշխատանքային առօրյա, բերքահավաք, այգեթաղ: Մարդկանց հարաբերությունները հիմնականում աշխատանքային-գործնական են: Կան նաեւ սիրային, ընտանեկան հարաբերությունների դրվագներ:

Ինչ բնավորություններ են վեպի հերոսները, ինչ առանձնահատուկ գծերով են բնութագրվում նրանք, եւ ինչպե՞ս է նրանց խոսք ու գրույցի միջոցով վեպ ստեղծվում:

Բագրատի կերպարն արտացոլում է վեպի հիմնական ոգին՝ աշխատանքը: Նա գործի է օրնիբուն, բանում է մվիրումով, աշխատանքը նրա տարերքն է: Բնավորությամբ նա քիչ կոպիտ է, չոր, նաեւ հաշվեմկատ է: Բայց իր ամբողջական նկարագրով նա գեղեցիկ է հիացմունքի արժանի էություն: Նրան ճանաչելու ընթացքում նաեւ բնական են թվում աշխատանքի մարդու թրծված չորությունն ու կոշտացած կոպտությունը: Փոփոխի գեղեցկությունն ու նրբությունն այս դեպքում անելիք չունեն: Դա կաղավաղող անմշակ ործաքար հիշեցնող նրա բնական գեղեցկությունը: Բագրատը նաեւ ճշմարտացի մարդ է եւ առավտից իրիկուն կռիվ է մղում ղեկավարության դեմ. առիթն աշխատանքի սխալ կազմակերպումն է, աշխատողին ու չաշխատողին հավասար մույն չափով վարձատրելու բարեհոգությունը: Նրա սիրտը ճաքում է, որ իրեն էլ են երկու «նորմա» գրում, «ավարա» Արտուշին էլ: Այդ դեպքում ինչո՞ւ աշխատի: Տարիներ շարունակ այսպես կռիվ տալով՝ «Ինձ ու են ավարային մի լծի տակ չեն լծի»,— վերջում զգում է իր արարքի ավերիկությունը, դադարում անտեղի կռվելուց եւ եռանդը գործադրում իր անհատական շահերի համար՝ օրվա մի մասն աշխատելով տնտեսության դաշտերում, մյուս մասը՝ իր իսկ ձեռքով բացած քարհանքում: Գալշոյանը շատ ճիշտ ու մտառոգ շեշտադրումով պատկերում է աշխատանքի կազմակերպման եւ գնահատման այն արատավոր պետական համակարգը, ինչն էլ աստիճանաբար կործանման հասցրեց ԽՍՀՄ-ի պես վիթխարի ամբողջ երկրի տնտեսությունը: Միջանկյալ ասենք, որ նույն հարցադրումն առկա է նաեւ Հ. Մաթեոսյանի «Տերը» վիպակում:

Ուշագրավ բնավորություն է Ներսեսը, ուշագրավ իր հակասականությամբ: Մի կողմից՝ արտաքին առօրյա հարաբերությունների ներքին նուրբ զգացողություն, մյուս կողմից՝ դրսևորումների կտրուկություն: Նա մեկ սիրում է մարդկանց, մեկ կատաղորեն ատում: Ատում է, որովհետեւ գյուղով մեկ ձեռք են առնում իրեն, ուրբաթախոս կանչելով՝ վրան ծիծաղում: Իսկ ինքն էլ, քանի որ վախվորած, անհամարձակ ու անվճռական մարդ է, միայն ներքուստ է բարկանում այդ «բացբերանների» վրա եւ դարձյալ ինքն իր մեջ քննադատում նրանց՝ գտնելով, որ համապարտության գրույցները միշտ մի հին ու հայտնի պատմության վերակրկություն են համեմված փչոցով ու չափազանցություն-

ներով: Ներսեսը մտածում է, որ այդ ամենն ինքն էլ կարող է պատմել, բայց ինչ իմաստ ունի սոսկ դատարկությունը լցնելու համար բոլորի գիտեցածը վերակրկնելը: Ներսեսը, իհարկե, իրավացի է, սակայն գյուղական



ներկակ կենցաղն էլ իր օրենքներն ունի: Այս բնավորությամբ Ներսեսն աստիճանաբար օտարվում է մարդկանցից, ծնունդ պարապ օրերին երկար մտտում տանը, մի սուտ գործ հորինում իր համար, որպեսզի գյուղամեջ չգնա, ոչ ոքի չհամոզիպի եւ չարժանանա ծաղրի ու կսմիթների: Այդուհանդերձ, Ներսեսը նաեւ սիրում է համապարտացիներին: Մոր թաղման արարողությունը հիշելիս նա խոր հարգանքով է լցվում իրեն ձեռք առնողների նկատմամբ, քանի որ նրանք նաեւ ձեռք մեկնող են, նեղ դրության մեջ հասնող, մտերիմ ու հարազատ: Սա երամի օրենքն է. ինչքան էլ տարբեր, բայց թռիչքի ժամանակ միասին, որովհետեւ ամեն մի թռչուն իր տեղն ունի: Այդպես, ինչքան էլ երամից դուրս, բայց համապարտացիների երամի մեջ էր նաեւ Ներսեսը, որովհետեւ երամը միասնաբար միշտ ինչ-որ բան ավելի շատ գիտեր, քան յուրաքանչյուրն առանձին: Այս օրենքի մեջ էլ մշակվում է յուրաքանչյուրի բարոյականությունը, այս օրենքն էլ դառնում է կենցաղյան ձգողական դաշտ:

Սանթրոն իր մոտավոր մամանկներն ու փոփոխականներն ունի Գալշոյանի նախորդ գործերում: Սրա մամանների միջոցով հեղինակը հոգեւոր կապ է ստեղծում հեռվում մնացած ծննդավայրի ու ներկա հայրենիքի միջեւ: Սանթրոն գլուխը կախ աշխատում է Հակինթի քարտուկներում, իսկ միտքն ու էությունը հեռվում են՝ Մշո դաշտում, հայրենի Աջմանուկում: Հեռավոր եզերքի կարտը ծխում է Սանթրոնի մեջ, ապրեցնում նրան հիշողություններով եւ անընդհատ մղում անցյալից պեղելու նոր կորուսյալ պատկերներ, անցքեր, իրադարձություններ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 30.04.2021 թ.

Տպաքանակը՝ 1225